№ 44—ՓԱՍԱՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 10 ՅՈՒՆԻՍԻ 1884

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տարեկան գինն է 10 ռուբլի.
վեց ամսականը՝ 5 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.
Առանձին համարներով բաբասանչիւրը 5 կոպէկ.

Թերթը դուրս է գալիս ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետոյ.

Յայտարարութիւնները վճարում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով.— Въ редакцію газеты «Меру Айастани», въ Тифлисъ, комъ Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).

Խմբագրութեանս ուղղած ՔՂ յօդուածները եւ ՔՂ նամակները պէտք է պարզ գրուած լինեն գրոցի առաքագրութեամբ եւ հասցէով. Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները. Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ.

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ. Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով. Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, «Կովկաս» հիւրանոցի տակ պ. Տէր-Յովհէփեանի ծխախոտի խանութում եւ պ. Շահվերդեանի պավիլիօնում.

Խմբագրութիւնս խնդրում է այն բաժանորդներից, որոնք դեռ եւս չեն վճարած լրագրիս տարեկան բաժանորդագինը, շտապեն վերջով հասցնել այդ խմբագրութեանս:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Մեղ ուղղած մի նամակի առթիւ Ներքին Տեսութիւն.— Թղթակցութիւն Կ. Պօլսից,
Քաղաքական,
Մանր լուրեր
Խառն լուրեր
Յայտարարութիւններ,
Բանասիրական. — Շեւսէրը.

ԹԻՖԼԻՍ, 10 ՅՈՒՆԻՍԻ 1884 Թ.

—

Խմբագրութիւնս տասցաւ մի բաց նամակ առանց տաորագրութեան. անհրնարին է կարդալ եւ փոտայի հնիքքին, որ գուցէ նորանով ձանաչէինք գրողին, եւ իրրեւ բարեկամի մանաւոր նամակով բացատրէինք կարեւորը: Նամակը վերջանում է լատինական «Quod licet bovi, non licet Jovi» խօսքերով: Նամակագիր պարոնը շատ անվայել եւ անքաղաքավարի պէս յոդուած (յօդուած) է անուանել «Մեղու» №-38 առաջնորդող, որ բովանդակութիւնն է Ներսիսի վիճակի ազգային բնաւորութեան մասին, որ աչքի առաջ ունենալով ս. Էջմիածնի ժողովը չէ ընդունել նորա հրաժարականն, եւ ընտրել է Նորին Սրբազնութեան, վատահ լինելով որ Նա, ինչպէս բազմից իւր հրաժարականները չեա է առել այս անգամ եւս, դրած ազգի համակրութիւնից եւ նորա պահանջից, չեա կառնու իւր հրաժարականն ու կը հնազանդի ազգի եւ եկեղեցական դասի կամքին: կարծումինք, որ այնքան պարզ է մեր վերոյիշեալ յօդուածն եւ այնքան Ներսիս Սրբազնութեան Ներսէս Պատրիարքի պահւին ու հեղինակութիւնը չը շօշափող, այլ եւ նորա զիջողականութիւնը ազգի կամքի առաջ Թուլութեան հանդէպ լաւ յատկութեան կերպարանքով ներկայացրած, որ ոչ ոքին որ եւ է կասկածի տեղիք չը պիտի տար, եթէ կարգացողը կանխակալ նախապաշարմունքով չը կամենար նայել նորա վերայ, բայց աշխարհս այնպէս է կազմակերպված, որ ամեն մարդ իւր ձայնին ունի: Այսպէս էլ մեր անծանօթ նամակագիր բարեկամը իւր ձայնով այդ մեր գրութիւնը գտել է անվայել յօդուածք, որով ինք չնայելով իրրեւ թէ կատարել (կարել) ն ո ր հ ը ն ա ր ա ր (նորընծար) կաթողիկոսի հեղինակութիւնը եւ հարց է տալիս թէ մի՞ թէ մենք աւելի ազնիւ եւ քաղաքագէտ չենք, քան պ. N. (մի այլ խմբագրի մականունն է գրած, որ մենք աւելորդ համարեցինք այստեղ յիշել):

Մենք միաք չ'ունինք ոչ այդ խմբագրի ազնուութեան եւ քաղաքագիտութեան մասին խօսելու եւ ոչ էլ մեր եւ նորա զուգակշռութեան մասին քննութեանց մէջ մտնելու, այդ պ. նամակագրի իւր գործն է. միայն այդ մեր անծանօթ բարեկամին կը հարցնենք, թէ արդեօք մեր համեստ գրուածքն է անվայել եւ անքաղաքագէտ, թէ պարոնի իւր բաց նամակն, որով նա առանց բաւարարութեան ուրիշների պատիւն է շօշափում ձեան մէջ իւր գլուխը փասեանի նման ծածկելով: Եթէ նամակագիր պարոնը մեր ծանօթ եւ բարեկամն է, կարող էր երկիք յօդեկի տեղ, նօթը կօպեկ տալ եւ ծրարի մէջ փաթաթած նամակ գրել եւ բացատրութիւն պահանջել, գուցէ այն ժամանակ աւելի ուղիղ ճանապարհն գիտենար եւ ամեն բան աշխատութեամբ տեսներ: Պարոն նամակագիրը, ինչպէս իւր գրուածքից երեւում է թէեւ հայագէտ չէ, իւր մայրենի լեզուով երեք շարք նամակն էլ անթերի գրելու կարողութիւն չէ ունեցել, միայն եւ մի հատարակ արհեստաւոր կամ խանութի աշակերտ էլ չը պիտի լինի, որովհետեւ լատինական առածով է վերջացնում իւր գիրն. ուստի եւ հատանական է, թէ լատինագէտ լինի:

Այսպիսի մի անձնից կարծում ենք, որ աւելի պահանջելի է, քան անքաղաքավարութիւն եւ ամբարտաւանութիւն, որոնք երեւում են նորա վարմունքի մէջ անձանց հետ, որոնք գուցէ բնաւ էլ պատիւ չեն ունեցել նորա հետ ծանօթ լինելու: Ուրիշներին քաղաքավարութեան դասատու, ամենաանքաղաքավարի եւ անվայել ձեւով — դա մեզ անհասկանալի է եւ յիշեցնում է այնպիսի պարոններին, որոց նեղսրտութիւն խղդելու ձեւը, գործած յանցանքից էլ աւելի մեծ յանցանք է: Արդեօք այդպիսի պարոնին աւելի յարմար չի գալ, իրրեւ պատասխան, վերադարձնել նոյն լատինական առածը, միայն առաջին մասը երկրորդի տեղ գնելով թէ Quod licet Jovi, non licet bovi:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼԻՍ
28 մայիս (9 յունիս)

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Շաբաթ մը եւս սահեցաւ, բայց կաթողիկոսական խնդիրը նոյնչափ չը յառաջացաւ եւ այսօր այնպիսի եւ բնոյթներ կ'ստանայ, որոց նկատը դժուարին է գուշակել: Ամենայն ոք պահ մը կարծեց եւ իրաւամբ թէ համապատասխան ուշադրութեան կէտ նպատակի պիտի լինէր Էջմիածին, բայց հազիւ 10 օր տեւեց այս վիճակը եւ անգամ մըն, որ ընտրողական ժողովը ցրուեցաւ անտի եւ հետագիրը առաջին ընտրելի ներկայեց ըզՆերսէս Պատրիարք՝ հրաժարական-ներու կուտակադէզ ամպեր Բիւզանդիոնէն մինչեւ ցկովկաս պատեցին հորիզոնը: Առաջին ընտրելին անսասան կը մնար իւր որոշման վրայ, երկրորդ ընտրելին ձայն չէր հաներ, իսկ երրորդ ընտրելին, որ վաստրակաների բարձանց վրայ իրրեւ արծիւ կը հանդիսէր, բայց որովհետեւ Էջմիածնի ընտրողական ժողովին համարները բոլ բաւականի չէր արժանացած, խոհեմութիւն կը սեպէր լռիկ ինչիկ հանդիսատես մնալ մինչեւ որ հորիզոնը պարզուի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԻԼԼԷՐԸ

*Նրա կեանքը, գրուածքները եւ այդ գրուածքների խորհուրդը հայ գրականութեան համար *).*

(Պ. ԳԻՆՐԻԽ ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆՑԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԹԻՒ).

Մանհէյմից դուրս գալու նախընթաց օրը՝ գրավաճառ Եվանսը մեծ յարգանօք ընդունեց Շիլլէրին, ճամբու ծախքի համար նրան չորս կարօլինա ընծայեց (իբր վարձատրութիւն նրա գրուածքին, որովհետեւ այդ ժամանակներում հեղինակներին վարձատրելու գաղափարը դեռմանացկներին անծանօթ էր) եւ իր Մարգարիտա աղջկան հետ ծանօթացրեց. Մարգարիտը չատ սիրուն աղջիկ էր. Շիլլէրի բանաստեղծական խանդը ոչ պակաս ազդուեցաւ այդ օրիորդի հետ ծանօթանալուց. Բայց հէնց որ բանաստեղծը իւր պաշտօնատեղին դարձաւ, հոգեկան թախիծը սիրեց դարձեալ նրա վրայ.

Առանց արձակուրդի իւր պաշտօնից հեռանալը, ճշմարիտ է, Շիլլէրի համար ոչ մի հետաքրք չ'ունէր, (որովհետեւ այդ բանը դաղանիք մնաց) բայց այդ անպիտան բժշկականութիւնը խեղճի հոգին հանում էր.

Մանհէյմում անցկացրած կարճատեւ, բայց ազատ, օրերն, այնտեղ ստացած պատիւ ու մեծարանքները՝ բանաստեղծի արագաթռիչ հոգին դէպ փառքն ու երջանկութիւն էին մղում. Մանհէյմում նրա վրայ նայում էին, ինչպէս մի բանաստեղծի վրայ. կրթուած և լուսաւորված մարդիկն էին այնտեղ նրան չրջապատում, գեղեցիկ սեռը նրանով յափշտակվում, իսկ այստեղ, ահ, Ատտուած իմ, Շիլլէրը բանաստեղծ չէ, այլ... մի հասարակ պինտորական բժիշկ, այն ևս ֆէլտշերի աստիճանով.

Դիւրազգաց բանաստեղծի ջղերը, կարծես, կտրատվում էին իւր ներկայ վիճակը, այդ հիւանդ, ուրուանիլ պինտորները, այդ դեղերն ու դեղատոմսերը, պաշտօնական յայտարարութիւններն ու հաշուեցուցակները,—այս ամենը, ինչպէս մի ծանր, անտանելի ու զզուելի բեռ. Նստած Շիլլէրի հոգու վրայ, պինդ կերպով նրան սեղմում, հուպ էին տալիս. Շիլլէրը արդէն ինքն իւր մէջ զգացել էր, որ բանաստեղծ է և ծնուած է բանաստեղծութեան համար, բայց իւր հայրենիքը, բարէ, չէ թոյլ տալիս, որ նրա բանաստեղծական հանճարը աճի և զարգանայ.

Ինչ էլ որ լինի, «Ազազակների» հեղինակը չէր կարող ներկայ վիճակի հետ իսպառ հաշտուել և, կարծես, մի ներքին ձայն անընդհատ վախտամ էր նրա ականջին և ւիր—«փախիր այստեղից».

— Փախչել, բայց ուր, ինչ և էլ ամ ձեռքից. Մէյնեդամ կարլ-եւգէնի իշխանն է, ամբողջ վիւրտէմբէրգի տէրը, բանաստեղծի իւրան, և իւր ծնողաց, բոլորը, այն մարդը, որ ինչպէս մի նոր Լուդովիկոս մի անգամ, ինչպէս պիտենք, ասել էր,—«հայրենիքը ձրան է, հայրենիքը ես ինքս եմ».

Ճարահատեալ՝ Շիլլէրը սկսեց նոր նիւթ պատրաստել մի նոր ազատերգութիւն գրելու համար. Եւ այս անգամ, գրաքանում երկար դեղերագիտից վրդ՝ նա գրեց իւր «Ֆիեսկոյի դաւադրութիւնը Ջենուայում».

Յետոյ՝ հետեւելով ժամանակի օրացոյցասէր (ալմանախ) ծօդային մի օրացոյց էլ ինքը Շիլլէրը գրեց. Դա նրա «1782 Թուականի Անասելիան» էր, ուր բանաստեղծը զետեղել էր իւր ծանօթների և իւր սեպհական բանաստեղծութիւնքը,—մեծաւ մասամբ, մանուկ հասակում գրած քնարերգութիւններ.

Գարնան բացուելովը Շիլլէրի յոյսերը նորից բացուեցան, թնաւորուեցան. Նա մի անգամ էլի գնաց Մանհէյմ, որոյ «երջանիկ արեգակը, իսկ և իսկ յոնյական կլիման միմիայն կարող էին նրան ճշմարիտ բանաստեղծ չինել».

Մանհէյմում բանաստեղծը ներկայացաւ Դալբերգին, խոստացաւ տեղական բեմի համար նոր պիեսներ գրել, ուսոի և խնդրեց, ազատից Թատրոնի տեսչից, որ սա միջնորդէ իշխանի առաջ Շիլլէրին ազատ կացուցանել բժշկի պաշտօնից. Դալբերգը խոստացաւ, չատ յոյսեր տուեց, բայց այդ ամենի հետեւանքը միմիայն այն եղաւ, որ «Ազազակները» երկրորդ անգամ բեմի վրայ դրուեցաւ, երկրորդ անգամ Շիլլէրը զգաց իւր մեծութիւնը և երկրորդ անգամ—իւր վիճակի դառնութիւնը.

Երիտասարդ բանաստեղծի մատաղ ղլխի վրայ, ի վաղուց հետէ, հաւաքված այնքան մռայլ ամպերը՝ վերջապէս մի օր պէտք է որ ճայթէին,—Շիլլէրը որոշեց դրական քայլն առնել.

Կարլ-եւգէնի իշխանը մինչեւ հիմայ Շիլլէրի չատ մեզմ էր վարվում իւր զինուորական բժշկի հետ, բայց և այնպէս նրա վրայ հսկում էր. Շիլլէրի ինչ պատուղ լինելը նա արդէն հասկացել էր, ուսոի և բանաստեղծի խոհերը չէր կատարում. Այսպէս՝ «Ազազակները» բեմի վրայ հանելուն թէ և ստատիկ հակառակ էր իշխանի բոլոր արքունիքը, բայց նա ինքը Թագաւորից այդ բանը. Մինչև անգամ ինքնիրան վչտացած էր ձեացնում բանաստեղծից, թէ սա ինչի իւր պիեսը, վոխանակ Շատեսպարտի բեմին, Մանհէյմի բեմի վրայ հանեց.

Բայց իշխանի այդ մեղմ վարմունքը երկար չը տեւեց. Մի քանի հանգամանքներ հարկադրեցին նրան զինուորական բժշկին հատ տալ. Այդ հանգամանքներին աւելի նպաստեց Շիլլէրի գրած մի ճառը, Ռիպէր անունով ժէնէռալի մահուան առթիւ. Այդ ճառի մէջ իշխանի բռնակալութեան և մանկավարժական հակումների դէմ, թէ և պատրուակեալ, բայց խիստ ակնարկութիւններ կային. Այնուհետեւ՝ Շիլլէրի գրուածքները իշխանի աչքում մի-մի հրէշային բան էին թուում և ընդհանրապէս անճաշակ, Թող որ այդ գրուածքներից պարզ յեղափոխութիւն էր փչում. Իշխանի զայրոյթը աւելի ատելացաւ առաւելապէս այն պատճառով, որ յիշեալ գրուածքների հեղինակը իւր իսկ ձեւարանի աշակերտն էր. Նա Շիլլէրին իւր մօտ կանչեց և, այս անգամ, քաղցրութեամբ յանդիմանելուց ղինի, հրամայեց որ առանց իւր նախընթաց հաճութեանը, այլ եւս իւր բանաստեղծութիւնքը չը ապէ.

Իշխանի մեղմ, կարելի է ասել, սիրալիր վարմունքը թէպէտ ազդեց դիւրազգաց բանաստեղծի վրայ, բայց նրա խիստ ակնարկութիւնները

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ. Ղ. Ալիշանի «Սիսական» գրքի առաջին հրատարակության 150-ամյակին

Հ. Ղ. Ալիշանի «Սիսական» գրքի առաջին հրատարակության 150-ամյակին նվիրված գիտաժողովը կայացավ Մատենադարանում։ Զեկուցումներով հանդես եկան Մատենադարանի տնօրեն Ա. Մովսիսյանը, Ալիշանի անվան Վենետիկի միաբանության միաբան Ա. Ալիշ

բանսխան, համաձայնութեան հասնել երիք յայտնի կէտերի վերաբերութեամբ (այն է, անգլիական տիրապետութեան ահմանափակումն երիք տարի ժամանակով, պետական պարտքի յանձնաժողովը զարձնել հաստատութիւն հաշուառուս տաննի իրաւունքներով և երրորդ ոչ անգլիացի ծառայողներուն թողնել պաշտօնի մէջ) լինաւմ են մի և նոյն ժամանակ բանակցութիւնք և մանրամասնութեանց ու վերոյիշեալ երիք կէտերի գործնական գործադրութեան մասին: Բանակցող կողմերը քննում են հարցը, թէ ինչպէս, երիք տարիւ յետոյ, պիտի կատարվի անգլիական զօրաց Եգիպտոս թողնելը և ինչպէս վարչութեան անգլիական-եգիպտական ձևը փոխարինվի այնպիսի եղանակով, որ ենթարկվէր միջազգային հաշուեպահանջութեան: Միւս կողմից Ֆրանսիայի և Անգլիայի կառավարութիւնք քննում են եգիպտոսի ելևմտական վիճակը, որպէս զի համոզվին, թէ որպիսի արդեանց վերայ կարող են իրանք հաշուել, և արդեօք ներկայ արդեանց ազբիւրները այն վիճակի մէջ են, որ բաւարարութիւն տալ կարողանան նոր պարտաւորութեանց, որոնք պիտի ծագինեն փոխառութեանց պատճառով, որոյ անհրաժեշտութիւնն եղաւ առիթ դեսպանաժողովի հրաւիրման:

Այժմ արդէն յայտնի է, որ եգիպտոսի արդեանց այն մասն, որ նշանակած է վարչութեան ծախուց համար՝ չէ կարող կրճատվիլ և խնդիրն այն մասին է, թէ արդեօք արդեանց ներկայ ազբիւրները բաւական են ծածկելու համար նոր պարտականութեանց պահանջները»:

«Times»-ի վիէննայի թղթակիցը գրում է. դրականապէս կարելի է ասել մինչև յայժմ ոչ մի արքունիք չէ արած ոչ պաշտօնական և ոչ մասերական հաղորդակցութիւն Ֆրանսիայի և Անգլիայի մէջ եղած բանակցութեանց մասին:

Ռուսաց արշաւանքի մասին, դէպի Միջին Ասիան, անգլիական «Times» լրագիրը հետևեալ առաջնորդող յօդուածն է գրում: „Ռուսաստանը բնաւ մոքիրը չէ անյկայնում Հնդկաստանի վերայ յարձակուելէ: Նըբա միակ նպատակն է այնտեղ ի վաճառ հանել իւր հում ապրանքները: Մեզ համար անհասկանալի է ոմանց կարծիքը, թէ յարձակումը չէ կարող տեղ ունենալ, բայց և ուրիշներ, մի և նոյն ժամանակ, երկիւղ են կրում մի գուցէ յարձակումը տեղ ունենայ: Մինչև որ Ռուսաստանը այս կամ այն միջոցաւ, մեր հնդկական իշխանութեանը մի սպառնալիք չի անիլ իւր ապրանքները սաղացնելու նպատակը չի յաջողիլ:

Մենք թէպէտ և չենք կարծում թէ Ռուսաստանը կասկից ծովի կողմից դէպի Հնդկաստան զօրք ուղարկելու լինի (այդ առթում մենք էլ սոսկալած կը լինէինք հերաթի կողմից մեր զօրքերը նրանց դէմ հանելը), բայց Ռուսաստանը կարող է և ուրիշ կերպ վարուել: Մեզ համար ամենից աւելի հաւանական կը թուի, որ Ռուսաստանը իւր զօրքերը կ'ուղարկէ դէպի Աւղանիստանի սահմանը, և յատկապէս դէպի այն կէտը, որ ամենից աւելի անտրոշն է և անմատոյց: Այն ժամանակ ուժերը ինչ որ կարող են, իրանց ձեռքը կը ձգեն և մեծ նպատակով Աւղանստանին, դաշնակցութիւն կ'առաջարկեն նրան: Դա կը լինի միակ և հնարաւոր ելքը: Սխուհետև ուժերը կամաց կամաց կը բարեկամանան էմիրների և միւս բոլոր ցեղերի հետ, որոնք բնականաբար, մեզ հետ կ'սկսին թշնամանալ: Եւ մենք կարծում ենք, որ հէնց որ Ռուսաստանը կամեցաւ մեզ անհանգիստ անել, իսկոյն և նմա այդ ցեղերին ոտքի կը կանգնացնէ, նրանց վէնքեր կը մատակարարէ և ուրիշ օգնականների առաջնորդութեամբ մեզ դէմ կը մղէ: Մի խօսքով Ռուսաստանը Աւղանստանում եղած թէ՛ բարոյական և թէ՛ ֆիզիքական բոլոր այժերիցը կ'աշխատի օգուտ քաղել: Մեր ապահովութեան համար, կարծում ենք, որ մենք էլ մի և նոյն քաղաքականութեանը պէտք է որ հետևենք: Մենք պէտք է Աւղանստանին անկախ դիրք տանք, զօրացնենք և ուժեղացնենք նրան, երկրի զանազան մասերի և բնակչաց հետ սերտ և անկեղծ բարեկամական յարաբերութիւն ունենանք: Փարուքնդ անելով Աւղանիստանը, կամ կեղծ ու պատիր բարեկամութիւն վարելով նրա հետ մենք նպատակի չենք հասնիլ: Մեր բարեկամութիւնը պէտք է լինի պարզ և շօշափելի փաստերով ապացուցուած, որովհետև Աւղաներին, որպէս ասիացիների համար, ուրիշ կերպ բարեկամութիւնը խորհուրդ չ'ունի: Մենք պէտք է ապացուցանենք Աւղան էմիրներին և ազգին թէ մենք չենք ուզում նրանց երկիրը խլել ընդհակառակը մենք ուզում ենք նրանց երկիրը ռուսաց յարձակմունքներից ազատել մեր անմիջական օգնութեամբ: Մեր քաղաքականութիւնը պէտք է լինի մեծահոգի և դրական: Եւ այդ քաղաքականութիւնը պաշտպանելու համար Աւղանստանում մենք պէտք է ունենանք հանճարեղ և երկրին հմուտ ներկայացուցիչներ մեր կողմից: Այս բանը ի հարկէ, առանց դժուարութեան, և գուցէ առանց վտանգի, չի լինիլ: Բայց ո՞չ ապաքէն միմիայն այդ ճանապարհով մենք կարող ենք հիմնաւորապէս ապահովել մեզ: Երբ Աւղաններըը կը համոզուին, որ նրանց շահերը և անկախութիւնը ապահոված է, այն ժամանակ մենք միանգամայն կարող ենք հանդիսա լինել, իսկ եթէ մենք այդ բանը չ'արինք, նշանակում է քաղաքական հաստնութիւնից զուրկ ենք: Այժմեանից մեր և Ռուսաց մէջ սկսվում է շուրջ մրցութիւն, քաղաքական ասպարիզի վերայ, և յաջողութիւնը, անշուշտ, այն ազգը միայն կը տանի, ով քաղաքականապէս աւելի հասուն է և զարգացած:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ կառավարչապետ իշխան Դ.Մնդաւիով-Կօրսակովի կարպաղրութեամբ մեծ պ. քաղաքական խորհրդական Ս. Ա. Մելիք-Մեհրաբեանցը գնում է Ս. Պետերբուրգ կաթուղիկոսական ընտրութիւնների մասին անձամբ զեկուցանելու համար Նախարարութեան:

***

Մեզ խնդրում են տպել հետևեալը.— Կուկիոյ Թանդոյեանց ս. Ատուածածին եկեղեցւոյ նորոգ երեսփոխանի ընտրութիւնը, որ պիտի կատարուէր անցեալ մայիսի 27-ին, յարգելի պատճառով յետաձգվեցաւ այսօր, ամսոյս 10-ին: Ուստի պատիւ եմ համարում սորանով ծանուցանել նոյն եկեղեցւոյ մեծ. ծխականներին և ժամատրներին՝ նշանակած օրը ժամը 10 ½-ին ներկայ լինել յիշեալ եկեղեցում ս. պատարագին և մասնակցել ընտրութեանը, որ կը կատարուի առանց յետաձգութեան, գաղտնի քուէարկութեամբ: Իսկ Հալաբարի ս. Կարապետ եկեղեցում, ուր կատարում է եբևտիսեանի պաշտօնը եկեղեցւոյ աւագ քահանան, նոյնպիսի ընտրութիւն կը կատարուի ամսոյս 17-ին, կիւրակէ օրը ս. պատարագից յետոյ, ժամի 10-ին, դարձեալ քուէարկութեամբ:

Վ. Երասեսսոյ բարեկարգութեան եկեղեցւոյ Հալաբարի՝

Յովհաննէս քահ. Մարտիրոսեանց.

***

Պ. Խթողը ԲԱԳՈՒԻՑ գրում է.—Մայիսի 28-ին սկսուց տեղիս ծխական.—«Մարդ. ընկ.» երկսեռ դպրոցի տարեկան հարցաքննութիւնը և վերջացաւ ամսիս 2-ին: Այդ դպրոցը բաղկացած է 6 սենեակներից, 4 սենեակում ուսանում են տղայք 4 բաժանմունքով, իսկ 2 սենեակում օրիորդք 3 բաժան.: Դասեր առանդվում է հետևեալ առարկաներից, կրօն, հայոց լեզու, Հայրենագիտութիւն, դիտողական ուսումն, թուաբանութիւն, բարոյագիտութիւն, թելադրութիւն, ռուսաց լեզու, և ձեռագործութիւն:

նկին: Դալբերգը դրանցից առաջինն եղաւ, որ այս անգամ բանաստեղծի բոլոր պայմանները արդէն ընդունելով, տարաւ նրան Մանհէյմ: Այս միջոցներումն էր, որ Շիլլերի ձեռքը մի փոքր փող էր անցնում, որով նա կամաց-կամաց վճարում էր իւր պարտքերը, պարտքեր որոց մէջ իսեղծը թաղուած էր: Մանհէյմում Շիլլերը այս անգամ մի ուսումնական ընկերութեան նախ անդամ, և մի փոքր ժամանակ յետոյ, նախագահ էլ ընտրուեցաւ:

Շատ նշանաւոր է այն ճառը, որ բանաստեղծը խօսեցաւ նախագահական աթոռի վրայ առաջին նստագում բարձրանալու ձառի մէջ նա, փառաւոր կերպով, ապացուցանում է թէ թատրոնը մի մեծ և բարձր նպատակ է, դրամատիկական գեղարուեստը. համեմատելով կրօնի հետ, նա նրանից, այսինքն գեղարուեստից ակնկալում է բարոյական —կրօնական նշանակութիւն ժողովրդի համար: Բոլոր ճառից, առ հասարակ, այն հիմնական միտքն է դուրս գալիս որ Շիլլերը, որպէս բարոյախօս, գեղարուեստի միջոցաւ ուզում էր կրթել և ազնուացնել մարդկութիւնը:

Եւ ինչ որ նա այդ ճառումը տեսականաբար ասաց, նորը գործնականապար արտացոլացրեց «Պօն Կարլօսի» մէջ.

Շատ չանցած՝ Դալբերգի և բանաստեղծի մէջ տարաձայնութիւնք ծագեցան առաւելապէս այն պատճառով, որ թատրոնի վերատեսուչը կամայական փոփոխութիւններ էր պահանջում մտցնել բանաստեղծի ստեղծագործութեանց մէջ. Շիլլերը կտրեց իւր յարաբերութիւնները Դալբերգի հետ և կրկին անձնատուր եղաւ անչափաւոր կեանքին... Ընդհքը այդ ամենը լսելով չատ վշտացաւ Նա-

Հարցաքննութիւնում կրօնից աւելի պահանջելի էր։ Առաջին բաժանման երկու սեռի աշակերտք բոլոր առարկաներից չատ գոհացուցիչ էին պատասխանում։ Այդ դասերի ուսուցիչք ինն ամսուայ ընթացքում, ինչպէս երևեցաւ պ. տեսչի կազմած ժապավենակալ մատեանից, ոչ մի դաս, ոչ մի րոպէ չեն ուշացած իւրեանց դասերից։ 2-րդ բաժ. աշակերտք, Հայրենագիտութիւնից թոյլ էին, միւս առարկաներից լաւ էին. ուսուցիչը 18 դաս թողած էր։ 3—4 բաժ. Հայոց լեզուից և Հայրենագիտութիւնից չատ լաւ էր. վարժապետը տեսուչ պ. Գալստեանցն էր, որը մի դաս էր բաց թողել ինն ամսում, այդ էլ դպրոցի վերաբերեալ գործի առթիւ։ Ռուսաց լեզուն բաւականի գոհացուցիչ էր. պատիւ պ. Ն. Յարութիւնեանցին, որ բարեխղճաբար էր կատարել իր ս. պաշտօնը։ Այդ պարոնը, յարգելի պատճառներից ստիպուած, 18 դաս բաց էր թողել։ Ձեռագործի վարժուհի տիկին Շուբանցը չատ ընդունակ է իր յարհեստում։ Շատերի յոյսը չ'արդարացաւ։ Բաց թողած ոչ թէ դասերը, այլ օրերը չատ չատ են։

Հարցաքննութեան օրերում միշտ ներկայ էին բոլոր արժ. քահանայք։ Առաջի օրում և՛ ներկայ էին ընկ. պպ. Նախագահը, առենադպիրը և մի անդամը։ Տխուր հոգաբարձուք, այդ օրերում բացակայ էին, բայլ իրանց նախագահ արժ. հայր Խորէնից, որը պատիւ էր բերում հանդիսին։

Ի վերջոյ, թէ այդպէս և թէ այնպէս, ծխական.— «Մարդ. ընկ.» դպրոցը այժմ չրջապատուած է թարմ այժերով— քարեխիղճ վարժապետներով և խորհուն տեսչով։ Ցիշատակուած դպրոցը լաւ ապագայ է գուշակում։

***

Մեզ խնդրում են հրատարակել հետեւեալը.— Ցօգուտ ս. Գայիանեան ուսումնարանի գրադարանի կազմած դասախօսութիւնից գոյացաւ 269 ռուբլի, որից 14-ը ապառիկ է, 65-ը ծախք է եղած, իսկ զուտ արդիւնք մնացել է 190 ռ.։

***

Թաւրիզից «Նոր-Դարին» գրում են, որ անցեալ մայիսի 23-ին սաստիկ կարկուտ է եկել, որ չատ մեծ վնաս է պատճառել այդիներին և առ հասարակ բուսականերին։

***

Բազուից մեզ հաղորդում են, որ Մարդասիրական ընկերութեան դպրոցներում քննութիւնները վերջացել են և այս տարի ապառում են նշանաւոր փոփոխութիւնք ուսուցչական խմբի մէջ։ Արդեօք երբ պէտք է վերջ դնվի այդպիսի անընդհատ փոփոխութիւններին։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Carnhill Magazine» ամսագրի մայիսի համարում տեղատրված է հատուած Կօլբուրն դնդապետի օրագրութիւնից։ Սա Գիքս-փաչայի անգլիացի սպաներից միակն էր, որ կենդանի մնաց, չնորհիւ այն հանգամանքի, որ հիւանդութեան պատճառով արձակուրդ ստացաւ և հասաւ Սուակիմ, Օսման-Դիզմայի ապստամբութիւնից և Սինկատի պաշարումից մի քանի օր առաջ։ Այսչէս նա վերջին եւրօպացին էր, որ ճանապարհորդեց Բերբերից Սուակին և նորա այս ճանապարհորդութեան նկարագրին աւելի ևս հետաքրքրական է այն պատճառով, այն ճանապարհն, որով նա անցաւ, ամենակարճն է անգլիական զօրաց համար, եթէ երբ և իցէ պիտի տեղի ունենայ անգլիական արշաւանքը Օմդուրմի ազատութեան համար, որոյ մասին այնքան չատ խօսեցան վերջին ժամանակ։ Եթէ մի անձն այդքան դժուարութեանց տանել պարտաւորվեցաւ, որպիսիք նկարագրում է Կօլբուրնը, որպիսի նեղութեանց և զրկողութեանց պիտի ենթարկվի ամբողջ մի բանակ, եթէ անգլիական կառավարութիւնը լսելու լինի պատուաստ խօսների ձայներին և զօրք ուղարկէ Օմդուրմի ազատութեան համար։ Հիւանդ Կօլբուրնը Քարտումում հրաժարական տուեց 15-ին յունիսի 1883 թ. Գիքս-փաչային, որ նրան ասաց այս մարդասիրական խօսքերը. «Ինչու է բարեկամի քմահնութների վերայ, որ ձեզ Անգլիա են ուղարկում. զուք նրանց չնորհակալ պիտի լինէք»։ Ջորս օրում Կօլբուրնը նաւակով Նեղոսի վերայով իջաւ մինչև Բերբեր և այտեղից սկսաւ նորա ճանապարհորդութիւնը անապատով։ Բայց իր այս ծանր ճանապարհորդութիւնը սկսելից առաջ նա հանդիպեցաւ մի բանի պարագաների։ Սա էր յայտնի անդլիացի Օ' Դոնալանը, որ դնում էր Գիքս-փաչայի բանակին և որոյ հետ նա լինչպէս յայտնի է և՛ ապանվեցաւ։ Կօլբուրնը վաղ նրան տեսել էր Կ. Պօլսում, Բերայի բանտում, ուր նա դրուած էր սուլթանի դէմ դրած վիրաւորիչ յօդուածների համար և Դիւֆֆերլինի միջնորդութեամբ ազատուած։ Այս յանդուգն անգլիացուն կարծես վիճակուած էր միշտ մի վտանգաւոր տեղից դէպի միւսը անցնել, մինչև որ վերջապէս, Ափրիկէում վերջ արուեցաւ նրա խիզախ կեանքին։ Անապատումը արած ճանապարհորդութեան ժամանակ Կօլբուրնին ուղեկցում էին մի եգիպտացի հիւանդ սպայ երկու բաշիբուզուկներ և մի քանի ուղտապաններ բիշարին ցեղից։

Այս ցեղը, որ 100,000-ից մինչև 150,000 հոգու է հասնում, Բաշի-Մուսա չեյխի ձեռքի տակ, բռնում է մի անորոշ տարածութիւն երկրի, Նեղոսի և Կարմիր ծովի մէջ։ Տարեկան 3,000 ֆ. ստէրլինգ վճարելով եգիպտական կառավարութեանը՝ այդ ցեղը ի վաղուց հետէ ազատուել էր ուզում այդ լծից, և հէնց որ Օսման-Դիզման սրբազան պատերազմ պարզեց։ յիշեալ ցեղն էլ ոտքի կանգնեց։ Կօլբուրնի խօքով բիշարին ցեղը գեղեցիկ ցեղ է, որ չատ է սիրում ամուսնանալ, որոյ համար չատ ժամանակ են հատուցում մնայ, և իր հոգուն մէջ ապրող ու մնանող վսեմ, առաքինի և գեղեցիկ սկզբունքները՝ գործադրել մարդկութեան կրթութեան համար, յոգուս ապագայ սերունդներին և ի փառս բանաստեղծի իրան յատկանական, անխառամ անուան և իր հայրենիքին։

—

Նիւէրին Լէյպցիկ հասած օրումը արդէն քաղաքի ամենաճամառը սկսուել էր։ Իր բարեկամ Գէօռները այնտեղ չէր, ծառայական գործերովը գնացած էր Դրէզդէն, ուստի և բանաստեղծը մի քանի օր չրջում էր քաղաքի մէջ և ուսումնասիրում մարդկանց։ Մի չաբթից յետոյ նա արդէն ծանօթ էր Լէյպցիկի բոլոր յայտնի գիտնականների և դերասանների հետ։ Այն կածէն, ուր սովորաբար ժողովում էին Լէյպցիկի յիշեալ ականաւոր անձինքը, այդ օրերում յաճախողներին թիւ չը կար։

Ամէն մարդ ուզում էր իր աչքովը տեսնել Գերմանիայի ճչմարիտ հանճարին։ Այդ առթիւ նչանաւոր են Նիւէրին, իր բարեկամ Գէօռներին, գրած նամակի մանաւանդ հետեւեալ տողերը— «Հաղարաւոր մարդիկ գնում գալիս, չարժվում են, որպէս ծոցի ժամացոյց, և կամ, եթէ կամիք, դրանց զգացողականութիւնը և գաղափարները նոյն են, ինչ որ երակներում մանկիկ արիւնը, մինչդեռ դրանց մարմինը անպայման իշխում է իրանց հոգու վրայ. Բայց հոգին կարող է, և պէտք է, որ իր իրաւունքները անչուչտ պահանջէ։ Սրանք են, ահա, հանճարի և ողորմելիան բոպէները»։

Լէյպցիկը, առ հասարակ, չատ մեծ և բարերար ազդեցութիւն գործեց Շիլլերի վրայ։ Այդտեղ նա ի մօտոյ ճանաչեց կեանքը, մանաւանդ նրա մէջին կողմերը։ Մարդկային գոյութեան բաղմատեսակ պայմաններին և ձևերին մէջ թափանցեց, մտաւ նաև կրթուած կանանց վրայ, առաքինի զգացողականութիւնը, նրանց հոգու և սրտի բոլոր գաղանիքները՝ բացուեցան նրա առաջ. Եւ այդ ամենից մնծապէս չահեցան նրա դերասանքները, մանաւանդ «Ֆօն-Կարլօսը» իր մէտ, փոքր և մնծ բանաստեղծութեանց մեծ մասը Նիւէրը Լէյպցիկում գրեց. կարդալով այդ գրուածքները մարդ իսկոյն նկատում է այն բարերար ազդեցութիւնը, այն լուրջ փոփոխութիւնը, որին ենթարկուած է Նիւէրը Լէյպցիկի բարձր չրջանակներում և այդ քաղաքի չրջականներում արած ճանապարհորդութիւններում և զբօսանաց ժամերում.

Այդ ժամանակների արդասիք են, ի միջի այլոց, Նիւէրի «Հոգևտաս» վէպը, որ կիսատ մնաց, «Ցանկասանի աստուածները», «Նիդերլանդացոց անջատման պատմութիւնը», Մերլանտոյի», «արհեստագէտները» (художники), «Աս ուրախութիւն». «Զանգակի երգը» և այլն։

Չը պէտք է մոռանալ, որ Նիւէրը չը նայած իր ստեղծողական մնծ զօրութեանը, շարունակ կարդում էր, եւ էլ ինչպէս կարդում։ Հոգով սրտով, բոլորովին, նա անմնատուր էր լինում իր ընտրած դրքերի կատարեալպէս ուսումնասիրութեանը։ Այսպէս այդ ժամանակ նա, չատ կարդում էր Կանտի վիլիսոփայութիւնը և Հոմերոսը։ Ահա նրա խօսքերը յոյն բանաստեղծի առթիւ։—«Ես առ այժմ ուրիշ ոչինչ չեմ կարդում, բայց ի Հոմերոսից։ Վճռեցի այլ ևս չը կարդալ ոչ մի նոր հեղինակութիւն։ Դրանցից ոչ մէկը իմ ցանկացած օդուտը ինձ չէ տալիս, ոչ մի հաճոյք ինձ չէ պատճառում։ Իսկական հաճոյք, հոգիս և սիրտս պարարող նրութիւ, միմիայն հներն են մէջն եմ տնտում և գտնում»։ Համեմատի վրայ Շիլլերը այնքան սիրահարուեցաւ, որ մտքումը դրեց յունական լեզուն կատարելապէս սովորել, թէպէտ նրա այդ փափաքը թերի մնաց։ Պատմութեան նչանակութեան համար Շիլլերը, ուրիշ անդամ, գրում է.—«Պատմութիւնն է այն միակ աղբիւրը, որտեղից ես պէտք է նրութիւ քաղեմ, և որով զբաղեցնեմ իմ գրիչը և խելքը»։

«Նիդերլանդացոց անջատման պատմութիւնը» ապացուցեց, որ Շիլլերը, ճչմարիտ որ, իր խօսքին և կամքին տէրն էր։ Այդ հեղինակութիւնը նոր դարաշրջան կազմեց։ Նրանով և նրանից յետոյ մարդիկ ուչք դարձրին և գրաւեցան, առ հասարակ, պատմական գրուածքների, ընթերցմամբ։

«Նիդերլանդացոց անջատման պատմութիւն»-ով Շիլլերը պատմական Մուսային աղատեց խմաստակութեան և անմիտ հնամոլութեան ճանկերիցը։ Բայց միշտ աչխատութեան ըստ արժէքը նրա բանաստեղծական գողտրիկ ձևը չէ լսկ, այլ նաև նրա մէջ բարձր և դերեզմցոլում է այն փիլիսոփայական միտքը թէ պատմութիւնը պատահական դէպքերի, անցքերի և անունների հաւաքածոն չէ, և չը պիտի լինի, այլ գաղափարների բարոյական կապակցութիւնը, զարծողութիւնը, թէ (ինչպէս ինքն է գրում) «ընդհանուր աղգայ պատմութիւնը, ընդհանուր աղգայ դատաստանն է»,—մի մարդաբանական կարծիք, որ այժմ արդարծված է։

Լէյպցիկից Շիլլերը վէյմար հրաւիրուեցաւ, ուր այդ ժամանակ, գերմանական երկնակամարի վրայ, իբրև այլոց, փայլում էին Գէօթէի նման աստղերը։ Վէյմարը Լէյպցիկից պակաս բարերար ազդեցութիւն չարաւ Շիլլերի վրայ։ Գէօթէի առաջարկութեամբ նա կնայի համալսարանում պատմութեան ուսուցչական պաշտօնը ստանձնեց և նրա առաջին դասախօսութիւնը— «Ի՞նչ նպատակի համար պէտք է ուսանել ընդհանուր պատմութիւնը»—չատ փառաւոր կերպով անցաւ։ Բայց ի 400 ուսանողներից, դրեթէ ոչ ոք քաղաքը բռնել էր համալսարանի ընդարձակ դահլիճը, պատգամիներն և նախադասները։

Դասախօսութիւնը այնքան լաւ ազդեցութիւն գործեց ունկնդիրների վրայ, որ երբ նա ամբիոնից իջաւ, ուսանողների խումբը սեանենատայով արտայայտեց իր յարգանքն ու համակրութիւնը դէպ ի նոր ուսուցչապետը։

Ուսուցչապետի պաշտօնը, սկզբում, Շիլլերը, ըստ կանոնի, ձրի էր ընդունել, բայց յետոյ, Գէօթէի միջնորդութեամբ, նրան բաւարար առձիկ ևս յատկացրին։ Այդպիսով Շիլլերը ազատուեցաւ իր նախկին դառն աղքատութիւնից և մտաբերելով իր միչտ սիրած ս. գրքի այն խօսքերն թէ՝ «ոչ է բարւոք մարդոյ միայն լինել» ամուսնացաւ վերոյիչեալ Շարլօտտա ֆօն-Լենգէֆելտ օրիորդի հետ։

Այդ բանը եղաւ փետր. 20-ին 1790 ամի։

(Ալը չարունակվի).

ՀԱՅԿՈՒՆԻ.

Խմբագիր Պ. ԻՍՄԻՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԼՆՋԻԱՃԵԱՆՑ.

ДОЗВОЛЕННО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 8-го Юня 1884 г. Типографъ. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41. Տպարան Մ. Ռոտինեանց և ընկ.